

ԱՄՍՆԱՐՅԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՁԵՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՄՆՋՈՅԱՆՆԵՐ



ԱՐՇԱԿ (ԱՐԻԿ)

Հիմա, պատմության այս «ակնթարթը» խնայողաբար փակցված է այսօրվա արդեն Ազատության հրապարակից ոչ հեռու, Արեսա-ծե 4 (Մախկինում՝ Պերվոմայսկի) հասցեում: Կրկին Արշակ Մնջոյանին (այսօր արդեն լեգենդար Արշակ Մնջոյանի թոռին) պատկանող, կրկին ֆոտոսահ է: Եկանք արդեն 2014 թվականին, հունվարի առաջին օրերին եւ «Վրաստան» թերթի ու նրա ընթերցողների անունից շնորհավորեցինք Մնջոյանների Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Մի խոսքով, այստեղ կրկին Արշակ Մնջոյան անունով վարպետ է աշխատում, այժմ արդեն շարունակում պապի ու ողջ գերդաստանի լուսանկարչական առաքելությունը: Սրահն իր գոյությանը մնջոյանական պատմության յուրովի մատյան է: Լուսանկարչական իր վերջին տարիները հենց այստեղ է անցկացրել Արշակ Մնջոյան ավագը, հետո որդին՝ Գիորգին, այսօր արդեն Գիորգիի որդին Արիկը (Արշակ կրտսերը), ով իր հերթին շարունակվող շառավիղներին՝ Վիկային ու Գոգային է փոխանցում լուսանկարչական արվեստի մնջոյանական գաղտնիքները: Քաղաքի սրտում այս գողտրիկ անկյունը լուսանկարչական արդի ծառայություններով զբաղվող պապուն ու պերճաշուք վերանորոգմանը եւ տեխնիկայով չի առանձնանում... Նախասրահում, որ պատմության մյուս էջերը փակում է վարագույրով, Մնջոյանների ձեռքերը կերտված պատմական լուսանկարներն են: Ինչն քաղաքի պատկերներն ու հին թիֆլիսցիներ:


- Չաճախ ինձ մեր գերդաստանի եւ ընդհանրապես լուսանկարչական սրահային արվեստի, վերջին սոցիալական եւ համարում... ափսոսում եմ, որ կորցրել է այն ամենը, ինչ կապվում էր ոչ միայն «թռչնակի դուրս թռչելու», այլև լուսանկարի լույս աշխարհ գալու բոլոր փուլերի հետ: Սրահային լուսանկարչությունը ավելի շուտ արվեստ է, այլ ոչ թե արհեստ: Ընդամենը մի 10-15 տարի առաջ դա տոն էր համարվում ոչ միայն մեր, այլև ամեն լուսանկարվողի համար: Այստեղ գալիս էին ընտանիքներով, գալիս էին հատուկ պատրաստված, ու սրահը լցվում էր գեղեցկությամբ, ամուսնու ծանելիքներով, ասես այդ վերջինն էլ պիտի ի հայտ գար լուսանկարում, պատմում է Արիկը: - Երբեմնիս էմ, որ այդ ամենի ստեղծողն ու ակնատեսը գոնե եղել է: Քավ լիցի, դեմ չեմ ժամանակակից մեթոդներին, առավել եւս, որ զավակներս ավարտելով թիֆլիսի ճարտարագիտական համալսարանը, այժմ թվային տեխնիկայի մասնագետ են: Բայց այդուհանդերձ, ես անընդհատ փորձում եմ հեռու պահել նրանց մեխանիկական աշխատանքից: Միշտ կրկնում եմ, որ լուսանկարիչն առաջնահերթորեն պատկերագրող է եւ պետք չէ, որ համակարգիչը իր փոխարեն աշխատի: Հարկ է շեշտը դնել գրավիչ այն շարմի վրա, որ ունեն

Լուսանկարում հին թիֆլիսի Պասկեիչ-Էրիվանսկու հրապարակն է, Պուշկինյան փողոցի սկիզբը ու շենքի վրա МЕЖОСЯ (Մնջոյան) ազդագիրը: Հրապարակում համոզություն է: 1921 թվականի հունվարի 1-ը: Լուսանկարը Մնջոյան լուսանկարչական համաքավոր սրահի ու հարուստ խանութի հիմնադիր, Կարսից թիֆլիս գաղթած Արշակ Մնջոյանինն է...

անխտիր բոլոր մարդիկ...
- Հետաքրքիր է, հարցնում եմ Վարպետ Արիկին, իսկ մեր ժամանակներում կա՞ն նման կերպ լուսանկարվել ցանկացողներ: - Դե սա թանկ հաճույք է, պատասխանում է նա: - Վերջին անգամ ոչ էլ հիշում եմ, թե երբ եմ «հնաժող» մեթոդներ կիրառել: Սկանդինավյան երկրներից եկած մի երիտասարդ էր, նա խնդրեց: Չնայած արտասահմանյան որոշ երկրներում սա համարվում է էլիտար արվեստ: Լուսանկարչական նման սրահներում միմիայն արհեստավարժներ են, փորձառուներ: Որպես օրինակ կարող եմ բերել հին թիֆլիսի, Մոսկվայի, Ստամբուլի լուսանկարները, եւ դրանք թվում են այն լուսանկարիչների կողմից ստեղծված լուսանկարները: Անկեղծ ասած, իմ, վերադարձել էր թիֆլիս ու ամեն ինչ սկսել գողտից: Իսկ կարող եմ այցելուների հոսքն այնքան էր մեծացել, որ Արշակն իրեն օգնական էր դարձրել 13-ամյա որդուն Գիորգիին: Սրահն այլևս նոր հասցե ուներ, գործում էր Լեւելիձե փողոցի սկզբամասում, համարյա երեսնամյա հրապարակին կպած: Իսկ հետո արդեն տեղափոխվեցին մինչ օրս սեփականություն համարվող այս վերջինը: Ու այս «մանրուքները» դարձան երկար ճանապարհի խոսուն վկան, մի ողջ գերդաստանի պատմությունը:

Եվ ոչ միայն Մնջոյան մեկ ծնունդի: Որովհետեւ ճանաչված լուսանկարիչ էր նաև Արշակի եղբայրը՝ Անդրանիկը, ում հիմնած ֆոտոսրահը գործում էր Մելիք-Ազարյանցի տան ներքնահարկում: Ու որի այցելուները թիֆլիսցիները լիազորում էին կյանքի հենց առաջին տարիներից, քանի որ քաղաքի Մանկական էր: Անդրանիկն իր իսկ հիմնած սրահում աշխատեց մինչև կյանքի վերջ՝ 1980-ականներ: Եղբայրների բույրը Գիորգը, թե

ու դիրքը բնավ նշանակություն չունեն, հավասար են բոլորը:
- Այս պահին,- շարունակեց Արիկը, երբ խնդրեցի զավեշտալի մի երկու դեպք պատմել,- հատկապես երկուսն եմ մտաբերում: Մի օր մի կին եկավ եւ լուսանկարչական իր սարքի համար լուսանկարչական ժապավեն խնդրեց: Գնեց, ապա խնդրեց տեղադրել: Պահպանելով սրահի հյուրընկալության կանոնները, ես կատարեցի խնդրանքն ու շարունակեցի իմ գործը: Կինը շարունակում էր կանգնած մնալ: Այդպես՝ 10, հետո 20, ապա էլի մի 15 րոպե կանգնեց: Ի վերջո, հայացքս ուղղեցի նրա կողմ: Նա գարմաքանց ինձ էր նայում եւ, հավանաբար էլի կնայեր ու կկանգնեց, եթե չհարցնեի, թե ինչն է կարող եմ օգտակար լինել, պատասխանը մինչ օրս հիշում եմ. «Բա հիմա ես ես ապարտավոլ ի՞նչ եմ անելու... Դեպքերից երկրորդն առավել զավեշտալի էր: Շատ պատկառելի հասակում հաճախորդներից մեկի բարեկամն էր մահացել: Եկավ ու խնդրեց շատ շտապ պատրաստել հանգուցալի լուսանկարը: Դե մենք աշխատում էինք երեսակիցներով (պրոյավիտել) եւ ամրացուցիչներով (զակրեպիտել), եթե մեկը կամ մյուսը ժամանակից շուտ կամ ուշ օգտագործվեր, ապա պատկերը որոշ ժամանակ անց, նույնիսկ ցնդել կարող էր: Ինչ բացքնեմ, շտապեցի: Լուսանկարը շատ արագ կերպով տեղ հասավ: Հաջորդ օրը, հուղարկավորությունից հետո, հաճախորդը զարմանք կտրած ու հրաշք վերապրած մարդու դեմքով եկավ սրահ. «Գիտե՞ք ի՞նչ եղավ,- բացականչեց նա,- հենց հողին բանձնեցինք, հինգ րոպե հետո պատկերը համբարձվեց»: Ծիծաղը հագիվ զսպելով, շատ լուրջ դեմք էինք ընդունել եւ անմիջապես պատրաստեցինք նորը: Եւ, առաջ ուրիշ էր էլի, մարդիկ զարմանալու առիթներ էին ունենում, ու դա առավել հետաքրքիր էր դարձնում մարդկային կյանքն ու էությունը:



ԱՐՇԱԿ (ԱՐԵՕ)



ԳԻՈՐԳԻ (ԳՈՐԱ)

նախանձով եմ նայում, որովհետեւ յուրաքանչյուրը դրանցից արվեստի մի առանձին ունի: Իսկ մեզ մոտ էլոյուցիան հասավ այն բանին, որ ռոբոտն է մեր լուսանկարիչը ու դա անում է ինչպես եւ ուր պատահի: Այսօր բոլորը լուսանկարիչ են, լրագրող...
- Անցած օրերի վերինը,- շարունակեց Արիկը,- փորձում եմ պահպանել ահա զոնե այս փայտե կախիչով, հայելիով, ուր հարդարվում են այցելուները, այս հին բազմոցով, հին իրերի իմ փոքրիկ հավաքածուով, ամեն ինչ թանկ է ինձ համար, յուրաքանչյուր մանրուք:

Մանրուքների» աշխարհը տեսանելի դարձավ, երբ բացվեց սրահի սենյակներից երկուսը տանող վարագույրը: Այստեղ էր թաքնվել Մնջոյանների կախարարական աշխարհը, աջակողմյան պատիմ սեւ-սպիտակ երանգի գեղեցկուհի թիֆլիսն էր, մեկից ավելի մետր երկարությամբ, որ լուսանկարվել էր Ֆունիկուլյորի բարձունքից, 30-ական թվականներին: Մյուս՝ ծախ կողմում, տոտավոր հսկայական լամպեր էին, հուշանվերներ, կլիշեներգատիվներ, սեւանկարներ, ըստ որում տարբեր ժամանակաշրջանների, նաև՝ լուսանկարչական սարքեր, այդ թվում թռչնակ դուրս բերողը, ու նույնիսկ վարսահարդարման, դեմքը շպարող միջոցներ, որոնք օգտագործում էին լուսանկարիչներն իրենց հերթական կերպարը կերտելիս: Ակամայից հիշեցի Արիկի խոսքերը. «թանկ է յուրաքանչյուր մանրուք»... Պատճառը հասկանալի էր: Նախ պապն ինքը ամենին հեշտությամբ չէր հասել ու նույնիսկ երեք տարի բուժելիկյան ճիրանների գողը դաժանալով տեղահանվել էր թիֆլիսից Կրասնոդար, «մեղադրվելով» «մաքսանենգ» ապրանք վաճառելու մեջ: Երեք տարի անց, Մնջոյանների ընտանիքն այնուամենայն

նու ղիրքը բնավ նշանակություն չունեն, հավասար են բոլորը:
- Այս պահին,- շարունակեց Արիկը, երբ խնդրեցի զավեշտալի մի երկու դեպք պատմել,- հատկապես երկուսն եմ մտաբերում: Մի օր մի կին եկավ եւ լուսանկարչական իր սարքի համար լուսանկարչական ժապավեն խնդրեց: Գնեց, ապա խնդրեց տեղադրել: Պահպանելով սրահի հյուրընկալության կանոնները, ես կատարեցի խնդրանքն ու շարունակեցի իմ գործը: Կինը շարունակում էր կանգնած մնալ: Այդպես՝ 10, հետո 20, ապա էլի մի 15 րոպե կանգնեց: Ի վերջո, հայացքս ուղղեցի նրա կողմ: Նա գարմաքանց ինձ էր նայում եւ, հավանաբար էլի կնայեր ու կկանգնեց, եթե չհարցնեի, թե ինչն է կարող եմ օգտակար լինել, պատասխանը մինչ օրս հիշում եմ. «Բա հիմա ես ես ապարտավոլ ի՞նչ եմ անելու... Դեպքերից երկրորդն առավել զավեշտալի էր: Շատ պատկառելի հասակում հաճախորդներից մեկի բարեկամն էր մահացել: Եկավ ու խնդրեց շատ շտապ պատրաստել հանգուցալի լուսանկարը: Դե մենք աշխատում էինք երեսակիցներով (պրոյավիտել) եւ ամրացուցիչներով (զակրեպիտել), եթե մեկը կամ մյուսը ժամանակից շուտ կամ ուշ օգտագործվեր, ապա պատկերը որոշ ժամանակ անց, նույնիսկ ցնդել կարող էր: Ինչ բացքնեմ, շտապեցի: Լուսանկարը շատ արագ կերպով տեղ հասավ: Հաջորդ օրը, հուղարկավորությունից հետո, հաճախորդը զարմանք կտրած ու հրաշք վերապրած մարդու դեմքով եկավ սրահ. «Գիտե՞ք ի՞նչ եղավ,- բացականչեց նա,- հենց հողին բանձնեցինք, հինգ րոպե հետո պատկերը համբարձվեց»: Ծիծաղը հագիվ զսպելով, շատ լուրջ դեմք էինք ընդունել եւ անմիջապես պատրաստեցինք նորը: Եւ, առաջ ուրիշ էր էլի, մարդիկ զարմանալու առիթներ էին ունենում, ու դա առավել հետաքրքիր էր դարձնում մարդկային կյանքն ու էությունը:

Չառայող հետաքրքիր ընթացք էր ստացել: Այս ամանորյա օրերին, Մնջոյանական սրահում նույնպես իրար էին խառնվել անցյալ, ներկա ու ապագա (Վիկան ներկա էր մեր գրուցին), խոսում էին բոլորը, մեկն ափսոսում էր անցյալը, մյուսը՝ բացում էր ապագայի դռները: Իսկ ես, որպես միջանկյալ ներկա այդ երկու ճանապարհների միջև, առավել քան ուրախ էի իմ նոր բացահայտման համար: Հպարտանում էի, որ տարիներ առաջ թիֆլիսիում նման խոշոր օջախ է գործել ու գործում է, որ թիֆլիսյան այդ հատվածում, ում հարցնես բոլորը գիտեն նաև այս Արահը եւ էլի որպես մնջոյանական: Որովհետեւ այստեղ լուսանկարվելուց բացի, նաև քերտորեն ընդունում են, զրուցում քեզ հետ, տրամադրում լուսանկարվելու...
- Կուզեի, որ սրահային լուսանկարչությունը վերադառնար իր բարի ակունքներից, քանի որ դա նաև մարդկային մի յուրահատուկ հարաբերությունների մշակույթ է,- ավելացրեց Արիկը,- հավանաբար այս հին պարագայերը հենց այդ նպատակով եմ պարունակում: Երբեք այդ նպատակով եմ պարունակում: Երբեք այդ նպատակով եմ պարունակում... Դե իմանա, մեկ էլ տեսար Մնջոյանների ինչ-որ մի սերունդ օգտագործեց դրանք... չէ՞ որ պատմությունը կրկնվել գիտի:

Մնջոյաններից Արիկը, բարձրագույն կրթությունն ստացել էր Լենինգրադում: Գնացել էր բոլորովին այլ ուղղությամբ՝ ճարտարագետ-մետաղագործ էր: Որոշ ժամանակ ապրելով Լենինգրադում ու խոշոր ձեռնարկություններից մեկում զբաղեցնելով ավագ ճարտարագետ-մեխանիկի պաշտոնը, նա 1978-ին, այդուհանդերձ վերադարձել էր թիֆլիսի, Մնջոյանների լուսանկարչական սրահ, որի Վարպետն արդեն հայրն էր Գիորգին:

- Մոտ մեկ ամիս հետեւում էի հայրիկիս աշխատանքին եւ հանկարծ զգացի, որ ես նույնպես լուսանկարում եմ: Ու ինքս էլ չեկատեցի, թե ինչպես իրար հաջորդեցին տարիները: Ինչպես լուսանկարների միջոցով ես ես սկսեցի պատմություններ ստեղծել: Գերդաստանի առաքելությունը շարունակելու իմ հերթափոխն սկսվեց: Տեսնու՞մ եք, այս սանդուղքը, այն «նետգեյմյան ապարտան» է: Մինչեւ այս երեք փոքրիկ սանդուղքով դուք նախասրահ եք մտնում, ես ձեր մասին պատկերացում եմ կազմում: 2է՞ որ գեղարվեստին հարելուց բացի, լուսանկարչությունը հոգեբանություն է նաև: Եի, ովքեր ասես, չեն իջել այս սանդուղքներով, Փարազանով, Կաշպիրովսկի...- շարունակեց նա: - Չնայած, ինձ համար լուսանկարվողի պաշտոնն

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ

Ամանորին մարդիկ բարի ցանկություններ են հղում միմյանց, բարություններ խնդրում իրենց օջախների, ծննդավայրի, երկրի, ազգի, ժողովրդի, մատաղ սերնդի համար: Իմ հարազատ գյուղի ու դպրոցի մանկավարժական կազմի, աշակերտության անունից ուզում եմ շնորհավորել բոլորի Նոր տարին, արելատություն մաղթել, լուսավոր ու խաղաղ օրեր, իսկ մանկավարժներին՝ բեղմնավոր աշխատանք, որ պիտի ծառայի աճող սերնդի ճիշտ դաստիարակությանն ու հիմնավոր կրթությանը:



ԷՄՍԱ ՂՈՒԼԿՅԱՆ

Ծավկայի շրջանի Ղզբիխայի միջնակարգ դպրոցի տնօրեն

Մոտ երկու տարի է, ինչ տեղափոխվել ենք բնակության ԱՄՆ, Նյու Յորք: Այստեղ եմ ընտանիքիս կնոջս Իլոնայի ու մեր երկու բալիկների՝ Նիկոլասի եւ արդեն ամերիկոսի Նատալիի հետ: Այստեղ ես հիմնել եմ իմ սեփական բեռնոցը, որն իր հետաքրքիր ծրագրերով ներկայանում է մեծահամբերներով, մասնակցում տարբեր միջոցառումների ու տոնախմբությունների: 2013 թվականն ինձ համար բուռն էր ու լի իրադարձություններով: Հյուրախաղերով եղա Ամերիկայի տարբեր քաղաքներում, Կանադայում: Ընդամենը մի քանի օր առաջ, որ ամենաշանադիրն էր, ես կրկին թիֆլիսիում էի, կրկին իմ ավագ ընկերների, այդ թվում՝ Կախի Կավսաձեի, Մամուկա Օնաշվիլու, Գիա ու Ջոնի Բաղաշվիլիների, մյուսների ու իմ կարոտած թիֆլիսյան հանդիսատեսի առջև եւ հարազատ միջավայրում... Թիֆլիսում էի, որպեսզի մասնակցեի վրացական առաջին թատրոնի 15-ամյա հոբելյանական հաներգին: «Վրաստանի» օգնությամբ շնորհավորում եմ ձեզ:



ՎԱՍԻ ԱՐԱՍՈՎ

Նյու Յորք, ԱՄՆ

Մեծ չէ Մառնուլիի շրջանի մեր՝ Չանախչի գյուղը: Բայց սիրում է այն, սիրում է իր մարդկանցով, հողի իր անդամվածան մշակներով, որոնց համար Նոր տարին ուրախանալու տարվա տրամանքով ձեռք բերած բարիքները վայելելու հիանալի առիթ է: Ամեն Նոր տարի ես, որ թիֆլիսից եկել ու տարիներ շարունակ տնօրինում եմ այս գյուղի կարոցը, ուրախանում եմ նրանց համար, հրճվում նրանց մաքուր ու գուլալ հոգիներով: Առիթից օգտվելով, ուզում եմ շնորհավորել բոլոր չանախչիցիներին ու մեր երկրի Վրաստանի բոլոր քաղաքացիներին Նոր տարին, մաղթել նրանց երջանկություն, քաջառողջություն եւ բազմաթիվ հաջողություններ ի փառս երկրի, ազգի, իրենց ընտանիքներին:

ՄԱՆԱՆ ԱՄՆՈՒԿՅԱՆ

Մառնուլիի շրջանի Չանախչի գյուղի դպրոցի տնօրեն



Ամեն Նոր տարի իր հետ բերում է առաջին հերթին, մարդկանց ու աշխարհին բարի մաղթանքներ հղելու ցանկություն: Չգուցե ես լավ բան ասելու կարիք, ուրախացնելու, գեղեցիկ պատեր պարգևելու կարիք: Ու այս ցանկությունները քեզ ավելի շատ ուղեկցում են հատկապես Նոր տարվա առաջին օրերին: Ախալցխի շրջանի եւ իմ Սիվիլիսի գյուղի անունից ուզում եմ շնորհավորել Վրաստանում ապրող իմ բոլոր հայրենակիցների նոր 2014 թվականը: Թող խաղաղ տարի լինի, բերքառատ տարի լինի հողի աշխատավորների համար եւ երջանիկ տարի բոլոր բոլորի համար:

ԳԵՎՈՐԳ ԷԹԵՆՍՅԱՆ

Ախալցխի շրջանի Սիվիլիսի գյուղավայր



ԱՍՏՂԵՐԸ՝ ԳՈՒՇԱԿՈՒՄ, ԲԱՅՑ ՉԵՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ ԻՆՉ ԵՍ ԽՈՍՏԱՆՈՒՄ ՄԵՁ, ՓԱՅՏԵ ՁԻ



ԽՈՅ 21.03-20.04

Աշխատասեր, նպատակասլաց ու արագահաս Ձին համառ հոյեքրին պարգևուն է շանս արմատապես փոխելու իրենց կյանքը: Հիմա ամենազխավորը խոյի համար հաջողությունների հույսը օգտվել կարողանալն է: Մանավանդ, որ բարեխաջող ու ցանկալի ապագան հիմնելը խոյերին կհաջողվի միայն ընկերների, համախոհների ու հովանավորների օժանդակությամբ:

Չեռնարկումներում եղբ համարձակ, որովհետև հիմա նույնիսկ ձեր ամենամեծ երազները կայելի երազանքները կարող են իրականանալ:

Անձնական կյանքում սպասվում են նշանավոր իրադարձություններ: Մեկը կգտնի իր մեծ սերը, մյուսը լուրջ ու սերտ հարաբերություններ մեջ կմտնի այն անձնավորության հետ, ով հետագայում մեծ դերակատարում կունենա նրա կյանքում:

Խոյին սպասվում է հաջողություն կարիերայում եւ մասնագիտական աճի ասպարեզում: Ինքնագագացողության պլանում ի հայտ կգա հակում դեպի սեւամարդություն, կարվի կասկածանտությունը: Ահա ինչու, առողջությանն առանձնացրեք պատշաճ ուշադրություն, որպեսզի կանխեք նրանց մշտական հիվանդության փոխարկվելը:



ԽԵՑԳԵՏԻՆ 22.06-21.07

Ձեզ Լուսնի զավակներիդ, սպասվում է իրադարձություններով հարուստ տարի: Կփոխվեն են կյանքի մասին ունեցած հայացքները, եւ վերաբերմունքը որոշ մարդկանց, նույնիսկ լավ ծանոթների հանդեպ:

Ապագային վստահությամբ նայելու եւ հասկանալու համար, որ անցյալի ապրումները չարժեքի աղբյուրն են տառապանքների, անհրաժեշտ կլինի վերաիմաստավորել շատ իրադարձություններ, արարքներ, վերանայել շրջապատը:

Նման ապրումները կուղեկցվեն տրամադրության փոփոխություններով, կարող են դառնալ ընտանիքի, ընկերների հետ կոնֆլիկտների պատճառ: Չի ունի խորհուրդն է՝ զսպեք ձեզ, մի՛ նետվեք ցցին...

Բնատուր լավատեսությունն այս տարի չի լքի ձեզ եւ կսատարի ամենաբարձր թվացող պահերին:

Բացառված չէ, որ անսպասելի ձեր գլխին «թավով» ժառանգություն: Ամուսինների համար, Չի ունի տարում, կարող է կայանալ երկար սպասված ամուսնությունը: Հաջողակ կլինեք, եթե մեծերը չմատնեք դատարկ բաների վրա: Առողջական խնդիրներում ձեզ կօգնեն բուսական դեղորայքը, դիետան, մարզանքը:



ԱՌՅՈՒՇ 22.07-22.08

Առյուծի համար Չի ունի տարում անկյունաքար կղաճան ընտանիքի, հարգատների հետ կապի, նաեւ անձնական սիրո, անունության հարցերը:

Առյուծներին սպասվում է լավ տարի՝ բոլոր տեսանկյուններով: Դուք կզգաք էներգետիկ լիցք, ներքին ուժ, ինչը, այժմ, կլինի խիստ անհրաժեշտ: Առյուծին կհետաքրքրեն կրոնի, հոգեկան զարգացման հարցերը:

Եթե ձեր սիրած էակը բնակվում է այլ երկրում կամ քաղաքում, վերջապես կհաջողվի գնալ նրա մոտ: Ձեզ սպասվում է երջանիկ միացում:

Կարիերայում Առյուծն այս տարի կգրավի ոչ պաշտոնական առաջնորդի դիրք:

2014-ը շատ Առյուծների համար, կղաճա ընտանեկան աճի շրջան:

Առողջական խնդիրները Առյուծը հակված է լուծել ոչ ավանդական, ժողովրդական բժշկությամբ: Ու դա կլինի ճիշտ ընտրություն:



ԿՈՒՅՍ 23.08-22.09

Ձեզ համար 2014-ը կլինի անհանգիստ, բայց չափազանց հետաքրքիր: Աստղերը Կույսերի համար պատրաստել են բավականին փորձություններ, որոնք, անտարակույս, կհաղթահարվեն, եթե հանդես երկվեն տոկոսություն ու համառություն: Կլինեն դժվարություններ, բայց փոխարենը կվաստակեք տպավորիչ արդյունքներ:

Կույսերից շատերի մոտ կբացահայտվեն նոր տաղանդներ, որոնց մասին նախկինում չէք էլ կասկածել:

Նոր ծանոթությունները կնպաստեն, որ արմատապես փոխեք ձեր պատկերացումները կյանքի ու ձեր իսկ մասին:

Միայնակ Կույսերին սպասվում է հանդիպում իսկական սիրո հետ: Հավանաբար դա տեղի ունենա ճանապարհորդելիս եւ ավարտվի ամուսնական կապով:

Այս տարի կունենաք պրոֆեսիոնալ աճի հնարավորություն:

Ձավակների հետ հարաբերություններում պահպանեք զուսպ մոտեցում, հիմա ձեզանից պահանջվում է ոչ թե քարոզ, այլ սեր եւ ընթացում:

Լուրջ բարդություններ առողջական հարցում այս տարի չեն լինի, եթե միայն պահպանեք առողջ ապրելակերպ:



ԿՇԵՐՔ 23.09-22.10

Կշեռքների, այսինքն Վեներայի հպատակների համար, 2014-ը կլինի իրադարձություններով հարուստ տարի:

Օգտագործեք ձեր ողջ հնայքը, ցուցադրեք ձեր օգնությունը, օգնության կոչեք բնածին ինտուիցիան, եւ ամեն ինչ ձեզ կհաջողվի: Կար-

գի բերեք փաստաթղթերը, գործերը, ծրագրերը, ամեն ինչ պետք է լինի կատարյալ վիճակում: Ձեր նշանաբանն է. «Մի թող վաղվան այն, ինչ հնարավոր է անել այսօր»:

2014-ը ձեզանից կպահանջի, նախաձեռնառաջ, հավաքակետություն ինչպես հոգեկան, այնպես էլ ֆիզիկական դաշտում:

Կա շանս հանդիպելու մարդկանց, ովքեր կղաճաճան ձեր գործերի հովանավորողը, կամ էլ՝ ձեր երկրորդ կեսը: Հավանական տեղափոխությունը այլ բնակարան կամ այլ երկիր, ընդունեք որպես հաջողական էտապ կամ նոր դուռ՝ դեպի նոր կյանք: Եթե ձեր ընտրյալի հանդեպ ցուցաբերեք առավելագույն քնքշություն եւ հոգատարություն, նրանից կստանաք ակնկալված վստահությունն ու հոգատարությունը:

Սեփական ինքնագագացողությունը Կշեռքների մոտ այս տարի գրեթե անթերի է, փոխառենը Ձին նրանցից պահանջում է՝ հոգատար ուշադրություն մերձավորների առողջությանը:



ԿԱՐԻՃ 23.10-21.11

Ողջ տարին կանցկացնեք այն զգացողությամբ, որ ինչ-որ բան խանգարում է ձեզ պարզել թեւերը: Ցանկացած հարցի ընդունում կպահանջի այնչափ ուժեր, որ կգերազանցի չձգտել ոչնչի: Եվ, այնուհանդերձ, մի անհոծեք ճակատագրին, անհրաժեշտ է ցուցաբերել ըմբռնողություն:

Կարիճի համար եկել է ինքնաճանաչման, իր եւ իր ընտանիքի, նույնիսկ կյանքում իր առաքելության մասին խորհելու ժամանակը: Այսինքն, տարին կոչում է ձեզ մտածելու եւ ոչ թե գործելու: Նույնիսկ ամենակտիվ Կարիճը չպետք է, այսպես ասած, կտրուկ շարժումներ անի, որոշումներ ընդունի: Ուղղակի պատկերացրեք, որ ձեր ճակատագրի ճանապարհին դրվել է արագությունը սահմանափակող սարք... Ուրեմն, ընթացեք հանգիստ ու դանդաղ...:

Չին կընդառաջի Կարիճի ռոմանտիկ տրամադրություններին: Հաճախ կայցելեն նախկին սիրո հուշերը: Նման դեպքերում՝ խուսափեք ձեր նվիրական ցանկությունները եւ չիրականացված երազանքները բարձրածայելուց: Դա կլինի ամենաճիշտ քայլը:

Տարին, ցանկացած եւ առանձնապես բիզնեսի հարցերում, ձեզ կոչում է զգուշության: Հոգացեք առողջության մասին, ամրապնդեք այն առողջարանում, հիմա ձեզ անհրաժեշտ են հնարավորինս շատ դրական զգացումներ ու հույզեր:


Մյուս տարի Աղեղնավորի հիմնական հույսերն ու անելիքները կապված են ընտանիքի հետ:

Ամուսին, երեխաներ, տուն, օհա թե ինչն է ձեր հոգսերի առարկան, կյանքի իմաստը: Փոխադարձաբար դուք կստանաք նրանց աջակցությունը: Գալիք իրադարձությունները ձեզ կստիպեն շատ բաների նայել նորովի: Ապաստվում են հաջող զգումներ՝ բնակարանի կախվորման համար: Ժամանակն է զբաղվել ժառանգությունը հաստատող փաստաթղթերով, ամառանոցի շինարարությամբ: Ձեզանում կհայտնաբերեք դիվանագիտական եւ միջնորդական տաղանդներ:

Առավելապես կարելու փոփոխություններ տեղի կունենան 2014-ի վերջին քառորդում: Աղեղնավորներից շատերը կգտնեն իրենց իսկական սերը, ոմանք իրենց երկրորդ կեսին: Ձեզ համար կբացվեն լավ վաստակի հնարավորություններ:

Առողջական վիճակն Աղեղնավորից պահանջում է կրկնակի ուշադրություն: Ձին խորհուրդ է տալիս խուսափել կենդանիների հետ շփվելուց, սնվել առողջ, պահպանել առողջ ապրելակերպ, օգտվել ոչ ավանդական, առավելապես՝ ժողովրդական դեղամիջոցներից:

Մյուս տարի Այծեղջյուրները երկար կհիշեն: Այծեղջյուրը հայտնի պահպանողական է, բայց հիմա ձեր խնդիրն է ամեն օր սկսել նոր էջից: Ձեզ սպասվում են մեծ տեղաշարժեր ու փոփոխություններ անձնական կյանքում, հարազատների հետ հարաբերություններում, կարիերայում: Դուք



ԱՅԾԵՂՋՅՈՒՐ 22.12-19.01


Գալիք տարին Այծեղջյուրները երկար կհիշեն: Այծեղջյուրը հայտնի պահպանողական է, բայց հիմա ձեր խնդիրն է ամեն օր սկսել նոր էջից: Ձեզ սպասվում են մեծ տեղաշարժեր ու փոփոխություններ անձնական կյանքում, հարազատների հետ հարաբերություններում, կարիերայում: Դուք

ձեռք կբերեք ներքին անկախություն, կամ էլ՝ կզգաք ընտանիքի եւ ընկերների հետ կապվածության պահանջ:

Հեշտ չի լինի իրաժարվել նախկին համոզումներին, սովոր նիստուկացից, բայց արդյունքում կհամոզվեք, որ փոփոխություններն օգնում են մոտենալ ցանկալի ու գլխավոր նպատակին:

Սերը Այծեղջյուրին կայցելի ամենախարմար պահի, դուք, պարզապես անկարող կլինեք դիմադրել բուռն կրքին, որը ժամանակի հետ կվերածի կա՛մ ներդաշնակ հարաբերությունների, կա՛մ կթողնի միայն ջերմ հուշեր: Գալիք տարին շատերին խոստանում է երկար սպասված առաջնեկի կամ ընդհանրապես երեսայի ծնունդ:

Ինչ վերաբերում է առողջությանը, ապա ցուցաբերեք ողջախոհություն՝ խուսափեք շատակերությունից, խմիչքի չարաշահումից, ջանացեք ավելի շատ հանգստանալ, ժամանակին քնել, հանգստանալ առողջարանում եւ... ամեն ինչ իր տեղը կընկնի:



ՋՐՈՍՍ 20.01-19.02

Ձեր հավասարը գալիք տարում հետևյալն է. «Աճել այն, ինչ իմ սրտով է»: Եթե հետևեք այս մտայնությանը, արդյունքը ձեզ հաճելիորեն կգարմացնի: Հաջողության կհասնի իրենում ստեղծագործական պոտենցիալ եւ այն առավելագույն օգտագործել կարողացողը:

Ընդհանուր առմամբ, 2014-ը Ջրոսին չի գուշակում առանձնահատուկ ձախդրություն կամ ցնցումներ:

Կյանքի հանգամանքները ձեզանից կպահանջեն պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացում: Հիմա ձեր իմնական խնդիրը կլինի տարբերել կյանքի իսկական արժեքները բոլոր երկրորդական հարցերից, կամ՝ ընդհանրապես ավելորդից: Այս տարի կուժեղանա պատվախնդրության զգացումը, ռիսկի դիմելու չափը: Եթե չխորանանկեք ու ճիշտ վարվեք, ցանկացած եւ նույնիսկ անելանելի իրավիճակից, դուրս կգաք հարթաբնակած, ինչը, ինքնին, կբարձրացնի ձեր հեղինակությունը շրջապատում: Ձին խոստանում է նաեւ աշխատավարձի բարձրացում:

Անձնական պլանում ձեր նշանաբանը կլինի. «Ուզում եմ սիրել» եւ հիմա, նույնիսկ պատահական ծանոթությունը կարող է վերաճել լուրջ զգացմունքի: Ապատիպից եւ ուժերի կորստից խուսափելու համար՝ աշնանը եւ գարնանը ընդունեք վիտամիններ:



ՉԿՆԵՐ 22.02-20.03

Չկներին սպասվում է չափազանց հագեցված տարի:

Չենք զարմանա, եթե, արդեն 2015-ի ամառային սեղանի շուրջ նստած լինի բնավ ոչ այն Չկներ, ով հիմա կանգնած է գալիք տարում ընդառաջ:

Իսկ ինչպիսի՞ն՞ օ՞, շատ հասունացած, իր հարաբերությունները՝ սիրած էակի, շրջապատի հետ վերաիմաստավորած, նաեւ վաստակելու կարողությունը ձեռք բերած եւ վաստակը ստորինել կարողացող մեկը: Հնարավոր է՝ նաեւ փոխած բնակության վայր ու մասնագիտություն: Հաջողության գլխավոր նախապայմանը ձեր անձնական ակտիվությունն է: Այս տարի համախափի հիշեք ասացվածքը. «Աստված՝ տալիս, բայց տուն չի բերում»:

Նախաձեռնա, Չկան մեջ կփոխվեն նպատակին հասնելու միջոցները՝ գերադասությունը կտրվի ոչ թե հարցի հոգեւոր, այլ՝ գործնական լուծումին: Ինչպես միշտ, 2014-ին նույնպես ներքին ձայնը Չկներին կծառայի անդալվաճան:

Ամուսնացած Չկներին սպասվում են ընտանեկան հարաբերությունների ամրապնդում, չանունացածներին՝ ծանոթություն, որը կարող է շրջել նրանց կյանքը: Հաջող կընթանան ֆինանսական խնդիրները: Կին Չկները, հավանաբար, մայրանան:

Առողջական պլանում Չկներին «թշնամին» կղաճա վատ ու անմիտ կանխագագությունը: Դա կանխելու նպատակով՝ Ձին խորհուրդ է տալիս զբաղվել յոգայով, ինչը կկանոնավորի մտքերը, կվերադարձնի ներքին ներդաշնակությունը եւ թույլ կտա ապրելու առանց դեղամիջոցների:

Պատրաստեք ՋՈՒԼԻԵՍՍ ԲՈՂԱՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

2016 ԹՎԱԿԱՆԻՑ ԿԱՑՆԵՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ



Հայաստանի կառավարությունը շարունակելու է ծրագրային բյուջետավորման ներդրման բարեփոխումները...

Արդյունքում այն կլինի իրավական հիմքերով ապահովված գործուն համակարգ: Վարչապետի խոսքով՝ կառավարությանը երեք տարի է ահարած լինելու ծրագրային բյուջետավորման համակարգ ներդրելու համար...

ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼՈՒՅՍ ԱՃԵՍՐԷ Է ԵՎԵՆ 401 ԵՐԵՄԱ

Հայաստանում 2014 թվականի հունվարի 1-ից հունվարի 7-ին ընկած ժամանակահատվածում ծնվել է 401 երեխա...

401 նորածիններից 121-ը լույս աշխարհ են եկել կեսարյան հատման միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՆՎՈՐՆԵՐԸ ԱՆՃԱՆՆԻ ԵՆ

Հայաստանի ողջ տարածքում ավորձանապարհներին իրականացվում են մշակման աշխատանքներ՝ անվտանգ երթուղիներում ապահովելու նպատակով:

Վրաստանի ՆԳՆ ԱԻ դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ստեփանոսմինոս-Լարս ավտոճանապարհը բաց է միայն մարդափոխ մինչև 30 նստադրոշ ունեցող ավտոմեքենաների համար:

ԿԱՆՅԱԿԱՅՎԵՆ ԱՐԱՅԻՆ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԳՍԵՐՈՅԻՆ ԽԱՂԵՐԸ

Հայաստանում առաջին անգամ 2014 թվականին կանցկացվեն Համահայկական ձմեռային խաղեր:

Մտադրանքները կանցկացվեն Սոչիի օլիմպիական խաղերի ավարտից հետո՝ փետրվարի 24-ից մինչև մարտի 2-ը: Խաղերում ներգրված են լեռնադահուկային և դահուկային սպորտը, սնուկը և փոփոխական սպորտը...

ՎԱՏԱՆՎԵՆ Է ԱՐՁԱԿԱԳԻՐ ԼԵՆՈՆ ԽԵՆՅԱՆԸ

Հունվարի 8-ին, ծանր հիվանդության հետևանքով վախճանվեց արձակագիր Լեոն Խենյանը: Ծնունդով Վրաստանի Ախալքալաքի շրջանի Բարալեթ գյուղից, 58-ամյա Լեոն Խենյանը 2000 թվականին «Ան գիրք ծանր բզեզ» վեպի համար արժանացել էր Հայաստանի պետական «Ոսկե եղջերու» մրցանակին:



ՄԱՆԱՑԵՆ Է ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԲԹԻԵՎ ՍՏԵՓԱՆ ԳԻՍՆՅԱՆԸ

74 տարեկան հասակում մահացել է Հայաստանի վաստակավոր բժիշկ, առողջապահության կազմակերպիչ Ստեփան Գիսնյանը: Ստեփան Գիսնյանը, ում երկար տարիների աշխատանքն անգնահատելի հետք է թողել սկզբում Բաթումիում, ապա 70-ական թվականներից Հայաստանի առողջապահության համակարգում: Երկար տարիներ եղել է Հայաստանի առողջապահության նախարարության 4-րդ վարչության պետ և կոլեգիայի անդամ:



ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԳԵՐԱԿԱ ԾՐԱԳՐԵՐԸ

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի համեմարարականով նախարարությունները և գերատեսչությունները ՋԼՄ-ների միջոցով հանրությանը կներկայացնեն առաջիկա տարվա իրենց բնագավառների գերակայություններն ու ծրագրերը:

«Ցանկանում եմ առաջին համեմարարականը տալ ձեզ: Մենք ըստ նախարարությունների և գերատեսչությունների հաստատել ենք գերակա խնդիրները, խնդրում եմ ձեզ, որպեսզի կազմակերպեք դրանց և տարվա ծրագրերի ներկայացումը հանրությանը, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա վերահսկել կառավարությանը՝ ըստ նախանշված ծրագրերի»:



Ված աշխատանք. նա նախարարներին մաղթեց աշխատանքային հաջողություններ:

ՎՐԱՍԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԷԼԵԿՏՐՈՎՈՐՈՂՈՂՄԱՆ ԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ Է



Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օղային գծի կառուցման ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացումը ներառվել է Հայաստանի կառավարության 2014 թվականի գերակա խնդիրների ցանկում, որոնք հաստատվել են Հայաստանի կառավարության հունվարի 9-ի նիստում:

Ներգիայի փոխանակման հզորությունն ապահովող Իրան-Հայաստան 400 կՎ երկշղթա էլեկտրահաղորդման օղային գիծը կակսվի Իրանի սահմանից և կհասնի մինչև «Հրազդանի էներգաբլոկ» շուրջ 275 կմ երկարությամբ: Նախատեսվում է կառուցել նաև «Նորավան» 400/200 կՎ լարման ենթակայան:

Օրագրի բացառիկ կարեւորությունից ելնելով՝ Հայաստանի Ազգային ժողովը ընդունել է օրենք Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օղային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող շինարարության աշխատանքների նկատմամբ հարկային և մաքսային վճարների արտոնություններ սահմանելու մասին:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԿՐԱՆԴԻՊԵՆ ՅՈՒՆԿԱՐԻ ԿԵՄԵՐԻՆ

Լիմայում պաշտոնական այցելությանը գտնվող արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, Պերուի ԱԳՆ դիվանագետների առջև հանդես է եկել Հայաստանի արտաքին քաղաքականության մասին ծավալուն ելույթով:

Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը մանրամասն ներկայացրել է դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի և միջազգային հանրության կողմից գործադրվող ջանքերը՝ ընդգծելով, որ Հայաստանը եԱՅԿ Սինսկի խմբի համաձայնագրի երկրների հետ համատեղ շարունակելու է հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորմանն ուղղված գործընթացը:



արտգործնախարարների ու եԱՅԿ Սինսկի խմբի համաձայնագրի հանդիպումը:

ՄՏՈՐԱԳՐՎԵՅ ԳԵՊՈՉԻՏԱՐԻԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՇՈՒՆԱԳԻՐ

Ռուսաստանի արժեթղթերի կենտրոնական ղեկավարի անձնակազմի ղեկավարը (ԱՅԴ) և Հայաստանի կենտրոնական ղեկավարի (ՀԿԴ) փոխհամաձայնության հուշագիր են կնքել փոխշահավետ հարաբերությունների զարգացման ու ամրապնդման մասին:

Կողմերը համաձայնել են ընդլայնել երկկողմ համագործակցությունը արժեթղթերի հաշվարկային տվյալների պահպանման արդյունավետ և հուսալի միջսահմանային համակարգ ստեղծելու համար: Հուշագրի համաձայն՝ ղեկավարի անձնակազմի և հուսալի միջսահմանային համակարգ ստեղծելու համար:

գիտարիաները միտված են ստեղծել սերտ գործարար կապեր և համակարգել սպասարկվող արժեթղթերի և հաշվարկային տվյալների պահպանման ծառայությունները կարգավորող իրավական ակտերի մասին տեղեկատվության փոխանակումը: Կողմերը նախատեսում են նաև տեղեկատվություն փոխանակել օգտագործվող տեխնոլոգիաների, գործունեության չափանիշների և զարգացման նախագծերի, ինչպես նաև նախագծերի մասնակցության, աշխատանքային խմբերի նիստերի և այլ միջոցառումների մասին, որ հետաքրքրում են երկու կողմերին:

ԿԱՇՆԱԿԻ «ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐ» ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԶԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի կառավարությունը 2014 թվականին նախատեսում է երաշխավորված նվազագույն ինքնաշարժ կրթությունից անցնել անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթության:

Հայաստանի կառավարության 2014 թվականի գերակայություններից է դարձնել փորձարկում անցած դասագրքերն ուսուցիչներից ստացված կարծիքների հիման վրա հեղինակային խմբի կողմից լրամշակել և խմբագրել, ինչի արդյունքում կլինեն որակյալ դասագրքեր: Կիրականացվի նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորում, կներդրվի ուսումնական համակարգիչների արտադրություն, կնշակվի «Ազգային երգ ու պար» առարկայի չափորոշիչ և ծրագիր:

Ների համար կտպագրվեն 2 անուն դասագրքեր (քրդերեն): Մանկավարժական կարգերի մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով նախատեսվում է կազմակերպել ազգային փոքրամասնությունների դպրոցների շուրջ 20 ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Հայաստանի կառավարության 2014թ. գերակայությունները հաստատվել են գործադիր մարմնի այս տարվա առաջին նիստում: Վարչապետը նախարարներին հանձնարարել է դրանք ներկայացնել հանրությանը ՋԼՄ-ների միջոցով:

	ՀՈՒՎԱՐ	ՓԵՏՐՎԱՐ	ՍԱՐՏ	ԱՊՐԻԼ	ՄԱՅԻՍ	ՀՈՒՆՎԱՐ	ՅՈՒՆԻՍ	ՀՈՒԼԻՍ
Երկ.	6	13	20	27	3	10	17	24
Երբ.	7	14	21	28	4	11	18	25
Չրք.	1	8	15	22	5	12	19	26
Հինգ.	2	9	16	23	6	13	20	27
Ուրբ.	3	10	17	24	7	14	21	28
Շաբ.	4	11	18	25	8	15	22	29
Կիր.	5	12	19	26	9	16	23	30
Երկ.	7	14	21	28	4	11	18	25
Երբ.	8	15	22	29	5	12	19	26
Չրք.	9	16	23	30	6	13	20	27
Հինգ.	10	17	24	31	7	14	21	28
Ուրբ.	11	18	25		8	15	22	
Շաբ.	12	19	26		9	16	23	
Կիր.	13	20	27		10	17	24	
Երկ.	14	21	28		11	18	25	
Երբ.	15	22	29		12	19	26	
Չրք.	16	23	30		13	20	27	
Հինգ.	17	24	31		14	21	28	
Ուրբ.	18	25			15	22		
Շաբ.	19	26			16	23		
Կիր.	20	27			17	24		
Երկ.	21	28			18	25		
Երբ.	22	29			19	26		
Չրք.	23	30			20	27		
Հինգ.	24	31			21	28		
Ուրբ.	25				22			
Շաբ.	26				23			
Կիր.	27				24			
Երկ.	28				25			
Երբ.	29				26			
Չրք.	30				27			
Հինգ.	31				28			
Ուրբ.					29			
Շաբ.					30			
Կիր.					31			



ՀՈՒՆՎԱՐ. 1, 2 - Նոր տարի, 7 - Սուրբ Ծնունդ, 19 - Ձրոհմեք: **ՍԱՐՏ.** 3 - Սայրության օր, 8 - Կանանց միջազգային օր: **ԱՊՐԻԼ.** 9 - Կրաստանի ազգային միասնության օր, 18 - Կարմիր ուրբաթ, 20 - Սուրբ Զատիկ, 21 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՄԱՅԻՍ.** 9 - Հաղթանակի օր, 12 - Սուրբ Անդրեաս Առաքյալի հիշատակի օր, 26 - Կրաստանի պետական անկախության վերականգնման օր: **ՀՈՒՆՎԱՐ.** 14 - Ազխերթ: **ՀՈՒՆՎԱՐ.** 14 - Ազխերթ: **ՀՈՒՆՎԱՐ.** 23 - Գիտություն:

Հայ Առաքելական եկեղեցու տաղավար տոները, որոնք Հայաստանում ոչ աշխատանքային օրեր են - **ՀՈՒՆՎԱՐ.** 5 - Ծրագլուցի տոն, 6 - Սուրբ Ծնունդ եւ Աստվածաձայնություն տոն (Ձրոհմեք), 7 - Հանգուցյալների հիշատակի օր: **ԱՊՐԻԼ.** 20 - Սուրբ Զատիկ, 21 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՀՈՒՆՎԱՐ.** 27 - Պայծառակերպություն, 28 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՕԳՈՍՏՈՍ.** 17 - Վերափոխում, 18 - Հանգուցյալների հիշատակի օր: **ՍԵՊՏԵՄԲԵՐ.** 14 - Խաչվերաց, 15 - Հանգուցյալների հիշատակի օր:

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Յեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Խմբագիր՝
ԿՐՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ